ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մասիս քաղաքային համայնքի 2018 թ. բյուջեի II եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ

Համայնքի 2018 թ. վարչական բյուջեի II եռամսյակի եկամուտները տարեկան պլանի նկատմամբ կատարվել են 49,3%-ով 575176.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց մուտքերը կազմել են 283329,7 հազ. դրամ:

Սեփական եկամուտները կատարվել են 48.9 %-ով, 245001.6 հազ. դրամի դիմաց կատարվել է 119694.6 հազ.դրամ:

Սեփական եկամուտներից՝

Անշարժ գույքի գույքահարկի մասով 58691.2 հազ. դրամ, առաջադրանքի դիմաց հավաքագրվել է 25035,5 հազ. դրամ կամ կատարվել է 42,7%-ով:

Փոխադրամիջոցների համար գույքահարկի մասով 54646,6 հազ. Դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 24352,7 հազ դրամ կամ կատարվել է 44.6 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը 11621.5 հազ. դրամի դիմաց կատարվել է 6489.7 հազ. դրամ կամ կատարվել է 55.8%-ով:

Պետական տուրքերը կատարվել է 61.4 %-ով՝ 11000.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 6751.6 հազ. դրամ:

Տեղական վճարները պլանավորված 89848.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 47731.9 հազ. դրամ կամ կատարվել է 53.1 %-ով, տեղական վճարներից աղբահանության վճարները կատարվել է 45.2 %-ով կամ 38000.0 հազ. դրամ առաջադրանքի դիմաց գանձվել է 17184.7 հազ. դրամ:

2018 թ. համայնքի վարչական բյուջեի II եռամսյակի ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 46.3 %-ով՝ 575176.0 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 266491.4 հազ. դրամ, որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել 42.6 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 43.0 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 27.9 %-ով:

Հանգստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 45.7 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 50.6 %-ով:

Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 38.5 %-ով:

Ֆոնդային բյուջեի ծախսերը առաջին կիսամյակում կազմել է 22029,2 հազ. Դրամ, որից վարչական շենքի հիմնանորոգման համար 999.0 հազար դրամ, համակարգչային ծրագրի ձեռք բերման համար 298,0 հազ դրամ, ճանապարհների հիմնանորոգման համար 6584.0 հազար դրամ, կոյուղագծերի հիմնանորոգման համար 4215,5 հազար դրամ, փողոցների լուսավորման համակարգի հիմնանորոգման համար 8159,2 հազար դրամ, բակային խաղերի տեղադրման համար 163,5 հազար դրամ,

նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար 1610.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան